ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արամ Մանուկյանի, Ստեփան Դեմիրճյանի, Լյուդմիլա Սարգսյանի և Լևոն Զուրաբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-708-30.01.2015-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է հուշարձանների պետական ցուցակների, պահպանական գոտիների նախագծերի, հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման կարգերի հաստատման, ինչպես նաև հանրապետական նշանակության հուշարձանների տեղա-

փոխման և փոփոխման թույլտվության տրամադրման իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին:

Հարցի հետ կապված ուսումնասիրել ենք հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման, տեղափոխման կարգերը հաստատելու, հուշարձանների պետական ցուցակների հաստատման, ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ միջազգային առաջավոր փորձը՝ Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան, Գերմանիա, Լեհաստան, Լատվիա, Ուկրաինա: Այս պետություններում նշված գործառույթների իրականացումը վերապահված է հանրապետական գործադիր իշխանությանը՝ կառավարությանը կամ պետական կառավարման տարածքային մարմիններին:

Բացի դրանից՝

1. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի դրույթները բովանդակային առումով չեն համապատասխանում «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին: Մասնավորապես, օրենքի 8-րդ հոդվածը վերաբերում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններին: Առաջարկվող փոփոխությունը չի վերաբերում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությանը և հակասում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասին:

Օրենքի նախագծի նույն մասում նշված «սուբսիդավորման վերցված անշարժ հուշարձան» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ, ուստի, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրա-

պետության օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի պահանջները, այն հստակեցման կարիք ունի.

2) 2-րդ մասի հետ կապված հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կարգերը կարող է սահմանել միայն իր լիազորությունների տիրույթում՝ օրենքով:

2. Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի դրույթներով սահմանվում է, որ հուշարձան-ների պահպանության և օգտագործման բնագավառում լիազորված մարմինն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է հուշարձանների պետական հաշվառման, պահ-պանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտա-գործման գիտամեթոդական կարգը:

Մինչդեռ նշված գիտամեթոդական կարգը ներկայացնելու կարգ օրենքով սահմանված չէ: Բացի դրանից՝ օրենքի նախագիծը, նախատեսելով գիտամեթոդական կարգը օրենքով սահմանված կարգով ներկայացնելը, չի նախատեսում որևէ դրույթ, որով կարգավորված կլինեն գիտամեթոդական կարգը ներկայացնելու կարգի հետ կապված հարաբերությունները:

Օրենքի նախագծում նշված չէ նաև, թե լիազոր մարմինը ում է ներկայացնում գիտամեթոդական կարգը:

3. Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի դրույթների, ինչպես նաև օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների միջև առկա է ներքին հակասություն:

Այսպես՝ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից բխում է, որ պետական պահպանության վերցված հուշարձանների հաշվառման կարգը սահմանվում է օրենքով: Մինչդեռ նախագծի 4-րդ հոդվածի դրույթներով սահմանվում են, որ հուշարձանների պետական հաշվառումն իրականացնում է լիազորված մարմինը՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Օրենքի նախագծում մասամբ պահպանված չեն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը:

Տեղեկացնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում և գերակա խնդիրներում ներառված է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, ըստ որի օրենքը շարադրվում է նոր խմբագրությամբ: Այն նպատակ ունի ամբողջությամբ կանոնակարգելու բնագավառի իրավական դաշտը, սահմանելու պատմամշակութային անշարժ ժառանգությանը վերաբերող հասկացությունները, հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, օգտագործման, ամրակայման, նորոգման, վերականգնման բնագավառի սուբյեկտների լիազորություն-ները և պարտականությունները, հնագիտական հետազոտությունների իրականացման գործընթացը, հուշարձանին վնաս պատճառելու դեպքում հնարավոր փոխհատուցման սկզբունքները և այլն: Օրենքի նախագծով նախատեսվում է ներդնել բնագավառում առկա խնդիրների համապարփակ լուծման մեխանիզմներ:

Միաժամանակ, պատմամշակութային անշարժ ժառանգության օրենսդրության կատարելագործումը միտված է գործող օրենքը համապատասխանեցնելու բնագավառին վերաբերող միջազգային կոնվենցիաների պահանջներին և չափանիշներին, մասնավորապես, «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության մասին» և «Հնագի-տական ժառանգության պահպանության մասին» եվրոպական կոնվենցիաներին:

Օրենքի նախագծի վերաբերյալ մոտակա ժամանակներում նախատեսվում է կազմակերպել հանրային լսումներ, և օրենքի նախագիծը քննարկել բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ու կողմերի մասնակցությամբ:

Օրենքի նախագիծը ենթադրում է մշակութային քաղաքականության մեջ իշխանության տարբեր ինստիտուտների ընդգրկման և հանրային մասնակցության հստակ մեխանիզմներ, որոնք հստակ լուծումներ են տալիս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից բարձրացված մտահոգություններին:

Այդ կապակցությամբ օրենքի նախագծի հեղինակներին առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ օրենսդրական նախաձեռնության քննարկումից և դրան անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք օրենքի նախագծի շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ փոփոխվում են հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի սուբյեկտները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով առաջարկվում է ՀՀ Ազգային ժողովը ճանաչել հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի սուբյեկտ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների ծախսերի և եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

Նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացմանը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-708-30.01.2015-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 5. Հուշարձանների պահպանության եվ օգտագործման բնագավառի սուբյեկտները»

Հուշարձանների պահպանության եվ օգտագործման բնագավառի սուբյեկտներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

գ) պետական կառավարման հանրապետական, տարածքային եւ տեղական ինքնակառավարման մարմինները.

դ) հուշարձանների սեփականատերերը, օգտագործողները.

ե) հուշարձանների պետական հաշվառման, պահպանման, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման հետ առնչվող իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները.

1. «դ) Անկախ սեփականության ձեւից պետական պահպանության կամ սուբսիդավորման վերցված անշարժ հուշարձանների ցուցակը, պահպանության գոտիների ցանկը, դրանց հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման կարգը սահմանվում է օրենքով».

2. «է) Սույն օրենքով եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանված կարգով թույլտվություն է տալիս տեղափոխելու եւ փոփոխելու հանրապետական նշանակության հուշարձանները».

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի (բ) կետը շարադրել նոր խմբագրությամբ.

1. «բ) Օրենքով սահմանված կարգով ներկայացնում է հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման գիտամեթոդական կարգը»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի երրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հուշարձանների պետական հաշվառումն իրականացնում է լիազորված մարմինը՝ սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պետական պահպանության վերցված հուշարձանների ցուցակները սահմանվում է օրենքով»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հուշարձանների պետական ցուցակներում նոր օբյեկտ ընդգրկելը եւ այդ ցուցակներից հանելը կատարում է ՀՀ Ազգային Ժողովը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կատարված փորձագիտական եզրակացության հիման վրա»:

Հոդված 7. «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (12 դեկտեմբերի 1998 թվականի, ՀՕ-261) 35-րդ հոդվածի երրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող այն հուշարձանների ցանկը, որոնք ենթակա չեն օտարման, սահմանվում է օրենքով»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ

Նկատի է առնված, որ 1998 թվականի դեկտեմբերի 12-ին (ՀՕ-261) ընդունված «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ի սկզբանե Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող հուշարձանների ցանկը, որոնք ենթակա չեն օտարման, հաստատում էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

Միայն 2003 թվականի ապրիլի 11-ի փոփոխությամբ է այդ իրավասությունը փոխանցվել ՀՀ կառավարությանը, որից հետո պետության կողմից պահպանվող հուշարձաններից շատերը, մասնավորապես մայրաքաղաքում, քաղաքաշինական նպատակներով քանդվել են, բնակիչները տարհանվել եւ կառուցվել են տարբեր «էլիտար» բարձրահարկ շենքեր: Կցվում է պետության կողմից պահպանման ենթակա այն հուշարձանների ցանկը, որոնք օրենքի վերոհիշյալ փոփոխությունից հետո քանդվել են, օտարվել կամ ապամոնտաժվել:

Աղաղակող փաստ է, որ մայրաքաղաքը իր պատմական դիմագիծը կորցրել է, հատկապես XIX դարի եւ XX դարի սկզբին կառուցված, նախկինում պետության կողմից պահպանվող պատմական շենքերի քանդմամբ կամ աղճատմամբ:

Որպես օրինակ կարելի է մատնանշել հանրության մեջ հատկապես բողոքի մեծ ալիք բարձրացրած այնպիսի շենքերի քանդումն ու օտարումը, որպիսիք են՝ «Սպայի տունը» Վազգեն Սարգսյան փողոցում, նախկին Պետդումայի շենքը Շահումյան հրապարակում, «Աֆրիկյանների տունը» Տերյան փողոցում, Գիտությունների Ազգային Ակադեմիայի հին շենքը (Լեզվի ինստիտուտի) Սայաթ Նովայի փողոցում, Երեւանի «Փակ շուկան», բազմաթիվ շենքեր Աբովյան, Հանրապետության, Արամի փողոցներում: Ինչպես նաեւ Հյուսիսային պողոտայի կառուցման ընթացքում քանդված հին Երեւանի տներն ու շենքերը:

Երևան քաղաքում ապամոնտաժված, խաթարված, տեղափոխման և պահպանման ենթակա հուշարձանների ցանկը

1	Արամի 88	Բնակելի տուն՝ Մուշեղյանների	Ապամոնտաժված չվերականգնված, Հուշարձանների ցանկում չներառված
2	Արամի 34	Բնակելի տուն՝ Խաչատուր Թադևոսյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
3	Արամի 36	Բնակելի տուն՝ Գեղամ Թադևոսյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
4	Արամի 86	Բնակելի տուն՝ Սարգիս Հախնազարյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
5	Նալբանդյան 20ա	Գործարանի շենք, Գիլանյանի լիմոնադի գործարան	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
6	Պուշկինի 11	Բնակելի տուն՝ Արմենակ Մելիքյանցի	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
7	Պուշկինի 28	Բնակելի տուն՝ Լավրենտի Ֆոտինովի	Ապամոնտաժված չվերականգնված, Պահպանման ենթակա
8	Արամի 74	Բնակելի տուն՝ Մկրտիչ Տեր-Օհանյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Տեղափոխման ենթակա
9	Բյուզանդի 17	Բնակելի տուն՝ Գևորգ Անտոնյանցի	Ապամոնտաժված չվերականգնված, Տեղափոխման ենթակա
10	Բյուզանդի 25	Բնակելի տուն՝ Գաբրիել Աբրահամյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Տեղափոխման ենթակա
11	Բյուզանդի 26	Բնակելի տուն՝ Վաղարշակ և Հակոբ Բաբախանյանների	Ապամոնտաժված չվերականգնված, Տեղափոխման ենթակա
12	Բյուզանդի 9	Բնակելի տուն՝ Հովհաննես Տեր Մկրտչյանի	Ապամոնտաժված չվերականգնված, Տեղափոխման ենթակա
13	Աբովյան 1/4	Բնակելի տուն՝ Գաբրիել Գաբրիելյանցի	Խաթարված, Պահպանման ենթակա
14	Ամիրյան 2	Ուսումնական հաստատության համակառույց մասնաշենք (Ավ.Իսահակյանի անվ. գրադարան)	Խաթարված, Պահպանման ենթակա
15	Ամիրյան 2/8	Ուսումնական հաստատության համակառույց, արական գիմնազիա	Խաթարված, Պահպանման ենթակա
16	Արամի 62	Բնակելի տուն՝ Կարապետ Ազիզյանի	Խաթարված, Պահպանման ենթակա
17	Բյուզանդի 53	Բնակելի տուն	Խաթարված, Պահպանման ենթակա
18	Բյուզանդի 55	Բնակելի տուն	Խաթարված, Պահպանման ենթակա
19	Հանրապետության 15	Բնակելի տուն՝ Կարլ և Վիլհելմ Գիլներների	Խաթարված, Պահպանման ենթակա
20	Հանրապետության 17	Բնակելի տուն՝ Արտեմ Ջալալյանի	Խաթարված, Պահպանման ենթակա
21	Հանրապետության 51	Բնակելի տուն	Խաթարված, Պահպանման ենթակա
22	Հանրապետության 53	Բնակելի տուն	Խաթարված, Պահպանման ենթակա
23	Հանրապետության 9	Բնակելի տուն՝ Էսապյանի (Էսապյանի պահածոյի գործարան)	Խաթարված, Պահպանման ենթակա
24	Աբովյան 10	Բնակելի տուն՝ Գրիգոր Ամիրյանի (այժմ՝ Երկրաբանության պետական թանգարանի շենք)	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
25	Աբովյան 12	Բնակելի տուն՝ Գրիգոր Ամիրյանի	Կանգուն՝ տարածքն օտարված,

			Պահպանման ենթակա
26	Արամի 7	Բնակելի տուն՝ Փանոս Սողոմոնյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
27	Արամի 9	Բնակելի տուն՝ Ֆադեյ Քալանթարյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
28	Բյուզանդի 4	Բնակելի տուն՝ Մկրտիչ Ենգիբարյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
29	Բյուզանդի 51	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
30	Բյուզանդի 8	Բնակելի տուն՝ Ստեփան Սողոմոնյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
31	Դեղատան 13 (նախկինում՝ Էնգելսի)	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
32	Հանրապետության 16	Բնակելի տուն՝ Ն. Հովհաննիսյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
33	Հանրապետության 46	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
34	Սախարովի 19	Հրշեջ կայան, կամավոր հրշեջ ընկերության շենք (հրշեջ դեպո)	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
35	Տիգրան Մեծի 13	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
36	Տիգրան Մեծի 15	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
37	Տիգրան Մեծի 3	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
38	Տիգրան Մեծի 9	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Պահպանման ենթակա
39	Արամի 23	Բնակելի տուն՝ Զարմայր Անդրեասյանի («Հայաստանի փոքրիկ երգիչների» երգչախմբի շենք)	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
40	Բյուզանդի 30	Բնակելի տուն՝ Երեմ Սանահյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
41	Բյուզանդի 39	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
42	Բյուզանդի 42 (նույնը՝ Կողբացու 22, բաղկացած է 2 շենքից)	Բնակելի տուն՝ Գեղամ Մնացականյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
43	Կողբացու 41	Բնակելի տուն՝ էմին Տեր-Գրիգորյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
44	Կողբացու 43	Բնակելի տուն՝ Հակոբ Բոշնաղյանցի	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
45	Կողբացու 45	Բնակելի տուն՝ Հովհաննես Օհանյանի	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
46	Պուշկինի 2	Բնակելի տուն	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
47	Տերյան 11-13	Բնակելի տուն՝ Աֆրիկյանների	Կանգուն՝ տարածքն օտարված, Տեղափոխման ենթակա
48	Բյուզանդի 13	Բնակելի տուն՝ Հ. Բաբայանի	Հուշարձանների ցանկում չներառված
49	Բյուզանդի 37	Բնակելի տուն՝ Պ. Ալթունյանի	Հուշարձանների ցանկում չներառված
50	Դեղատան 6 (նախկինում՝ Էնգելսի)	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
51	Դեղատան 8 (	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված

	նախկինում՝ Էնգելսի)		
52	Զաքարիա Սարկավագի 4-րդ նրբ. 12 (նախկինում՝ Կամոյի)	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
53	Իսրայելյան 39	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
54	Լեոյի 74	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
55	Խորենացու 16 (նախկինում՝ Մարքսի)	Քաղաքային դումայի և վարչության շենք	Հուշարձանների ցանկում չներառված
56	Խորհրդարանի 26 (նախկինում՝ Շահումյան)	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
57	Ծարավ Աղբյուրի 2 (նախկինում՝ Իլյիչի)	Հասարակական շենք	Հուշարձանների ցանկում չներառված
58	Կողբացու 29	Բնակելի տուն (Ալեքսանդրյան իգական գիմնազիա)	Հուշարձանների ցանկում չներառված
59	Կողբացու 49	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
60	Կողբացու 53	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
61	Նալբանդյան 3	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
62	Սիմոն Երևանցու 37 (նախկինում՝ Չկալովի)	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
63	Սիմոն Երևանցու 43 (նախկինում՝ Չկալովի)	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
64	Տերյան 125	ԵրՊԻ մասնաշենք	Հուշարձանների ցանկում չներառված
65	Տերյան 127	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված
66	Տերյան 129	Ուսանողական պոլիկլինիկա	Հուշարձանների ցանկում չներառված
67	Տերյան 31	Բնակելի տուն՝ Գալստյանի	Հուշարձանների ցանկում չներառված
68	Տերյան 9	Բնակելի տուն՝ Կ. Եղիազարյանի	Հուշարձանների ցանկում չներառված
69	Կորյունի 12	ԵրՊԻ մասնաշենք	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
70	Մայիսյան 22	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
71	Մաշտոցի 13	Առանձնատուն (Դերասանի տուն)	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
72	Մաշտոցի 46	Դպրոց (Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց)	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
73	Ռուսթավելու 25	Բնակելի տուն	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
74	Տերյան 121	ԵրՊԻ մասնաշենք	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
75	Տերյան 123	ԵրՊԻ մասնաշենք	Հուշարձանների ցանկում չներառված, Կանգուն
76	Եկմալյան 1-ին նրբ. 9	Բնակելի տուն՝ Արտեմ Յարալյանի	Պահպանման ենթակա
77	Հանրապետության 18	Բնակելի տուն՝ Վ. Մկրտչյանի	Պահպանման ենթակա
78	Հանրապետության 48	Բնակելի տուն	Պահպանման ենթակա
79	Նալբանդյան 20բ	Ակումբի շենք, քաղաքային ակումբ (Ջանփոլադյանի թատրոն), (Սպայի տուն)	Պահպանման ենթակա
80	Պուշկինի 19	Բնակելի տուն՝ Աղաջան Աֆրիկյանի	Պահպանման ենթակա